ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստ

ք. Երևան 05 մարտի 2018թ. Ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ. Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
7. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
8. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին
9. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

2.1 Սահմանված ժամկետում գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Հասցե	Էլ. փոստի հասցե
1	«Սմարթլայն» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Վարդանանց 110	ssmartline@mail.ru

3.Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

3.1 Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել է հետևյալ մասնակիցը՝ «Սմարթլայն» ՍՊԸ:

4.Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

4.1 «Սմարթլայն» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված փաստաթղթերը:

5.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

5.1 «Սմարթլայն» ՍՊԸ մասնակիցը կազմել և ներկայացրել է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր:

6.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

6.1 Գնման առարկա է հանդիսանում ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար Տպագրության թղթի ձեռքբերումը, որը խմբավորված է 2 չափաբաժիններում:

6.2 Պայմանագիրը կատարելու համար հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնահատված մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			
		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային գին
1	**Թուղթ օֆսեթ**				984 000
1.	«Սմարթլայն» ՍՊԸ	820 000	164 000	984 000	
2	**Թուղթ A4 ձևաչափի**				648 000
1.	«Սմարթլայն» ՍՊԸ	459 000	91 800	550 800	

«Սմարթլայն» ՍՊԸ մասնակցի հայտով ներկայացված գնային առաջարկում չկան թվերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանություններ:

7.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

7.1 N 1 և 2 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

7.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջները, գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկել ծանուցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցին, որպեսզի վերջինս հրավերով սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնի իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ համաձայն հրավերով նախատեսված հավելված N 6 և հավելված N 6.1-ի:

7.3 Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

8. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:

8.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

9. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

9.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից եզրակացության ստացման հաջորդող աշխատանքային օրը:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ _____ Հ. Արչունց

Գնահատող անդամներ (ԳԱ)՝ _____ Թ. Ջաքարյան

_____ Շ. Հարությունյան

Բացող անդամներ (ԲԱ)՝ _____ Ա. Իսկանդարյան

_____ Հ. Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ. Բաղդասարյան